# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Երանոս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Երանոս, (0262) 6-00-73, (093) 33-07-37
yeranos.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2015թվականի N 23-Ա

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 20.07.2015թ. N 01/13/2625 գրությունը`

որոշում եմ

1. Համայնքում գործող մանկապարտեզի կողմից սննդամթերքի ձեռքբերման գործընթացը պարբերաբար ուսումնասիրելու և վերահսկելու նպատակով ձևավորել հանձնաժողով հետևյալ անհատական կազմով.

Մնացականյան Գառնիկ - հանձնաժողովի նախագահ, գյուղապետի տեղակալ

Քարամյան Մելիք - հանձնաժողովի անդամ, գյուղապետարանի առաջատար մասնագետ

Հարությունյան Ռազմիկ - հանձնաժողովի անդամ, համայնքի ավագանու անդամ, բուժակ /համաձայնությամբ/

Ղազարյան Խաժակ - հանձնաժողովի անդամ, համայնքի ավագանու անդամ, /համաձայնությամբ/

Հագեյան Սամվել - հանձնաժողովի անդամ, համայնքի բնակիչ (ծնող) /համաձայնությամբ/

Հոխիկյան Իշխան - հանձնաժողովի անդամ, համայնքի բնակիչ (ծնող) /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին` յուրաքանչյուր աշխատանքային շաբաթ 1 օր պարբերաբար մանկապարտեզում ստուգել սննդամթերքի ձեռքբերման գործընթացը.

3. Մանկապարտեզի տնօրեն Ն. Սաֆարյանին՝ սահմանված կարգով մանկապարտեզի շենքի տեսանելի վայրում փակցնել սննդամթերքի ծեռք բերման պայմանագրերի պատճենները.

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՊԵՏՆԱԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

20 13թհուլիսի 21.
գ.Երանոս